տայստեզ կ'ուղարկեն. եթէ կ'ուզես, որ քու վրադ գութ ունենան՝ զրուցէ, յայտնէ ամէն ինչ ճշմարտութեամբ:

— Զարուհի է իմ անունս, ես դուստր եմ Գրիգոր Սուփան Սիւնեաց իշխանին, որ այս ամառ սպանուեցաւ Բաբկէն Սիսականէ:

— Գիտեմ այդ թշուառ դիպուածը, որդեակ, զրուցէ՛ հիմա թէ ինչո՞ւ զքեզ այստեղ ուղարկեցին:

— Հայրս երկու տարի առաջ զիս Բաբկէնի որդուոյն Աշոտի հետ նշանած էր, հիմա եղբայրս Վասակ զիս ուզեց ամուսնացնել Գարղմանաց Կտրիճ իշխանին, եւ որովհետեւ ես յանձն չառի հնազանդիլ՝ զիս այստեղ բանտել յուղարկեց…

— Մի լար, որդեակ, այստեղ բանտ չէ, եւ եւս քիչ ժամանակեն կը դարձնեմ քեզ քու տունդ, դու ապահով կաց: Բայց մայրդ ի՞նչ կ'ըսէր այս պարագային մէջ:

— Մա՞յրս, ո՛հ, մայրս եթէ կենդանի լինե՛ր…

— Մի՛ լար, Զարուհի, հանդարտէ,— ըսաւ Վասկանուշ, բայց իւր աչքերն էլ լցուեցան այդ պարզ եւ միամիտ աղջկան կատարեալ որբութիւնն իմանալով, եւ քանի մը շրջան րնելեն վերջ դարձաւ հարցուց.

— Բայց դու Մշոտի հետ ամուսնանալ կ'ուզէի՞ր, եւ ա՞յդ բանին համար քեզ Կտրիճին պիտի տային:

— Աշոտ իմ նշանածս էր եւ ես զինք կը սիրէի, բայց երբ իմ հայրս նորա հօր ձեռքեն մեռաւ, իւր տղուն հետ ինձ ամուսնանալ անկարելի է ըսին, եւ ես հաւանեցայ. սակայն Կտրիճը չար մարդ է, ես այդ մարդեն կը սոսկամ. թողուին զիս եւ ես տունը կը նստէի. թո՛ղ մեզ մօտ վանք կար հոն դնէին, յանձն կ'առնուի, զիս այսպէս հեռու տարագիր ըրին, այդչափ մեծ իշխաններ, վարդապետներ,